ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դվին համայնք
, +(374)235 6-00-67, Dvingp@inbox.ru dvin.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 02 ՓԵՏՐՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 2 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

ՂԵԿԱՎԱՐՎԵԼՈՎ "ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ" ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 14-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ԵՎ 6-ՐԴ ԿԵՏԵՐՈՎ

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Դվին համայնքի 02 փետրվարի 2017 թվականի թիվ 2 հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանու անդամներ	*Կողմ՝*	*Դեմ՝*	*Ձեռնպահ՝*
Գ.Բաբեղամյան			
Կ.Դավթյան			
Գ.Կիրակոսյան			
Հ.Նազարյան			
Ա.Գրիգորյան			
Վ.Դերմոյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *ԱՐԾՐՈՒՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ*

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Դվին համայնքի ավագանու
2017 թվականի փետրվարի 02-ի
թիվ 5 որոշման

ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 02-Ի ԹԻՎ 2-ՐԴ ՆԻՍՏԻ

1. ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ ԵՎ ՎՃԱՐՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. ՝Ա. Աբրահամյանը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դվին համայնք
, +(374)235 6-00-67, Dvingp@inbox.ru dvin.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 6-Ն

ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ ԵՎ ՎՃԱՐՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

ՂԵԿԱՎԱՐՎԵԼՈՎ "ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ" ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 18-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 18-ՐԴ ԿԵՏՈՎ, "ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ" ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 12-ՐԴ ԵՎ 14-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՎ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ "ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԱՍԻՆ" ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 75-ՐԴ ՀՈԴՎԱԾՈՎ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1 Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դվին համայնքի տարածքում 2017 թվականի համար տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:

2. Անվավեր ճանաչել Դվին համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 23-Ն և նոյեմբերի 28-ի թիվ 25-Ն որոշումները:

Համայնքի ավագանու անդամներ	*Կողմ՝*	*Դեմ՝*	*Չեզոնպահ՝*
Կ.Դավթյան			
Գ.Բարեղամյան			
Վ.Դերմոյան			
Հ.Նազարյան			
Գ.Պիրակոսյան			
Ա.Գրիգորյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԾՐՈՒՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված 2

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Դվին համայնքի ավագանու
2017 թվականի փետրվարի 02-ի
թիվ 6-Ն որոշման

ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԸ ԵՎ ՎՃԱՐՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության համայնքներում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը՝ *յոթ հազար հինգ հարյուր դրամ.*

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը՝ *տասնհինգ հազար դրամ:*

- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը՝ *քսանհինգ հազար դրամ:*

- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը՝ *քսանհինգ հազար դրամ:*

- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հարյուր հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը՝ *հիսուն հազար դրամ:*

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեք հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը՝ *հազար հինգ հարյուր դրամ:*

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հինգ հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը՝ *երկու հազար հինգ հարյուր դրամ:*

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված

ինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ երեք հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը՝ *հազար հինգ հարյուր դրամ:*

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ հինգ հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը՝ *երկու հազար հինգ հարյուր դրամ:*

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ *երկու հարյուր հազար դրամ.*

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ վաթսուն հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը՝ *երեսուն հազար դրամ:*

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ, կիրառել 0.75 գործակիցը՝ *երեսունյոթ հազար հինգ հարյուր դրամ:*

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը՝ *երեք հազար դրամ*

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար մեկ դրամ, կիրառել 0.5 գործակիցը՝ *հինգ հազար դրամ:*

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնվեց հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը՝ *ութ հազար դրամ:*

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ դրամ, կիրառել 0.5 գործակիցը՝ *տասը հազար դրամ:*

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեսուն հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը՝ *տասնհինգ հազար դրամ:*

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ութսուն հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը՝ *քառասուն հազար դրամ:*

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը՝ *երեք հազար դրամ*

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար մեկ դրամ, կիրառել 0.5 գործակիցը՝ *հինգ հազար դրամ:*

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնվեց հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը՝ *ութ հազար դրամ:*

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ դրամ, կիրառել 0.5 գործակիցը՝ *տասը հազար դրամ:*

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեսուն հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը՝ *տասնհինգ հազար դրամ:*

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ութսուն հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը՝ *քառասուն հազար դրամ:*

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ *երեք հարյուր հիսուն դրամ* մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը՝ *քսանհինգ հազար դրամ:*

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հարյուր հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը՝ *հիսուն հազար դրամ:*

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ չորս հարյուր հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը՝ *երկու հարյուր հազար դրամ:*

դ. խաղատների համար՝ մեկ միլիոն դրամ, կիրառել 0.5 գործակիցը՝ *հինգ հարյուր հազար դրամ:*

ե. շահումով խաղերի համար՝ հինգ հարյուր հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը՝ *երկու հարյուր հիսուն հազար դրամ:*

զ. վիճակախաղերի համար՝ հարյուր հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը՝ *հիսուն հազար դրամ:*

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը՝ *մեկ հազար դրամ:*

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասը հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը՝ *հինգ հազար դրամ:*

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը՝ *յոթ հազար հինգ հարյուր դրամ:*

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսան հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը՝ *տասը հազար դրամ:*

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեսուն հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը՝ *տասնհինգ հազար դրամ:*

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հիսուն հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը՝ *քսանհինգ հազար դրամ:*

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը՝ *հինգ հարյուր դրամ:*

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար դրամ , կիրառել 0.5 գործակիցը՝ *մեկ հազար դրամ:*

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը՝ *երկու հազար դրամ:*

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը՝ *չորս հազար դրամ:*

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը՝ *յոթ հազար հինգ հարյուր դրամ:*

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսանհինգ հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը՝ *տասներկու հազար հինգ հարյուր դրամ:*

11) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ, կիրառել 0.75 գործակիցը՝ *հազար հինգ հարյուր դրամ:*

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ, կիրառել 0.75 գործակիցը՝ *երկու հազար վեց հարյուր քսանհինգ դրամ:*

գ. սոցիալական գովազդի համար՝ *զրո դրամ,*

դ. այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ, կիրառել 0.75 գործակիցը՝ *հազար հարյուր քսանհինգ դրամ:*

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

12) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության,

աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը՝ *հիսուն հազար դրամ:*

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տասը հազար դրամ, կիրառել 0.75 գործակիցը՝ *յոթ հազար հինգ հարյուր դրամ:*

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հինգ հարյուր հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը՝ *երկու հարյուր հիսուն հազար դրամ:*

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը՝ *մեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար դրամ:*

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ, կիրառել 0.5 գործակիցը՝ *երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ:*

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ միլիոն դրամ, կիրառել 0.5 գործակիցը՝ *երեք միլիոն հինգ հարյուր հազար դրամ:*

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ տասը միլիոն դրամ, կիրառել 0.5 գործակիցը՝ *հինգ միլիոն դրամ:*

Սույն հոդվածով սահմանված դրույքաչափերի համար կիրառել 0.3, 0.5, 0.75 գործակիցները, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասի:

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ *տասը հազար դրամ:*

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ *տասը հազար դրամ:*

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ *տասնհինգ հազար դրամ:*

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.՝ *երկու հազար դրամ:*

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ *երկու հազար դրամ:*

7) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը համայնքի ավագանին սահմանում է ,Աղբահանության և սանիտարական մաքրման մասին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում՝ *զրո դրամ:*

18) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ մինչև հազար դրամ փոխհատուցման վճար՝ *հինգ հարյուր դրամ:*

Աշխատակազմի քարտուղար՝ Գ. Մկրտչյան